ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի նախագծով պաշտպանության ու հասարակական կարգի և անվտանգության բնագավառների ծախսերի վերաբերյալ







2023 թվականի պետական բյուջեի նախագծով 509 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել պաշտպանության ոլորտին, որը 2022 թվականի հաստատվածից ավել է 46.7 %-ով կամ շուրջ 162 մլրդ դրամով, 2021 թվականի փաստացի մակարդակից ավել է 51.5 %-ով, 2020 թվականից ավել է 31.3 %-ով, 2019 թվականի ցուցանիշից ավել է 61.3 %-ով և 2018թ. փաստացի մակարդակը գերազանցում է 113.4 %-ով: Ընդ որում, 2023 թվականին ռազմական պաշտպանությանն ուղղված ծախսերը 2022 թվականի հաստատվածի համեմատ կավելանան 47.2 տոկոսով կամ 160.7 մլրդ դրամով, 2021 թվականի փաստացիի համեմատ կավելանան 50.2 տոկոսով, 2020 թվականի և 2019 թվականի համամատ, համապատասխանաբար՝ 30.6 տոկոսով և 65 տոկոսով:

2023 թվականին պաշտպանության բնագավառի ծախսերը կկազմեն՝

- ՀՆԱ-ի 5.5 %-ը , որը 1.1%-ային կետով ավել է 2022 թվականի ծրագրված մակարդակից, 0.7 %-ային կետով ավել է 2021 և 2019 թվականների փաստացի մակարդակներից, 1.5 %-ային կետով գերազանցում է 2018 թվականի փաստացի մակարդակին, սակայն 0.8 %-ային կետով պակաս է 2020 թվականի փաստացի մակարդակից,
- պետական բյուջեի ընդամենը ծախսերի 19.7 %-ը , որը 2.8 %-ային կետով ավել է 2022 թվականի հաստավածից, 1.9 %-ային կետով ավել է 2021 փաստացի մակարդակից, 0.3 %-ային կետով ավել է 2019 թվականի փաստացիից, 3.2 %-ային կետով գերազանցում է 2018 թվականի փաստացին, սակայն 0.8 %-ային կետով պակաս է 2020 թվականի փաստացի ցուցանիշից:

Պետական բյուջեի Հասարակական կարգ և անվտանգություն բնագավառին 2023 թվականին նախատեսվում է տրամադրել 199.6 մլրդ դրամ, որը 2022 թվականի հաստատվածից ավել է 85.5 %-ով, 2021 թվականի փաստացի մակարդակը գերազանցում է 97 %-ով, 2020 թվականից ավել է 106.1 %-ով և 2019թ. փաստացի մակարդակից ավել է 122.9 %-ով:

Հասարակական կարգ և անվտանգություն /ՀՆԱ ցուցանիշը 2023 թվականին կանխատեսվում է 2.1 %-ի մակարդակում, որը 0.7%-ային կետով ավել է 2022 թվականի ծրագրվածից, 0.6%-ային կետով ավել է 2021 թվականի փաստացի մակարդակից, իսկ 2020 թ. և 2019 թ. մակարդակներից ավել է, համապատասխանաբար՝ 0.5%-ային կետով և 0.7%-ային կետով:

2023 թվականի պետական բյուջեի նախագծով ընդամենը ծախսերում հասարակական կարգ և անվտանգություն բնագավառի ծախսերը կկազմեն 7.7%: Այն 2.8 %-ային կետով ավել է 2022 թվականի ծրագրված մակարդակից, 2.6 %-ային կետով ավել է 2020 թ. և 2021 թվականի փաստացի մակարդակներից և 2.2 %-ային կետով գերազանցում է 2019 թվականի փաստացիին: